Կին և քաղաքականությունը

Ամենամյա անվճար հավելված

Հուլիս 2008 թ.

Քարե դարի գեղեցկության իդեալի՝ «Վիլլենդորֆյան Վեներայի» արձանիկը հայտնաբերվել էր Ավստրիայում:

Էջ 4

Այս լուսանկարը մրցանակ է շահել «Իմ երջանիկ ընտանիքը» ցուցահանդեսում, որը բացվեց ՄԱԿ-ի երևանյան գրասենյակում հուլիսի 11-ին՝ Բնակչության համաշխարհային օրվա տոնակատարության շրջանակներում: Անցյալ տարի այն անցկացվեց «Տղամարդիկ մայրական առողջության պահպանության գործընկերներ են», այս տարի՝ «Դա իրավունք է, եկեք իրագործենք այն» կարգախոսով: Խոսքը վերարտադրողական առողջության և իրավունքների մասին է, ներառյալ, ինչպես նշեց ՄԱԿ-ի մշտական ներկայացուցիչ և ՄԱԶԾ համակարգող, դեսպան Կոնսուելո Վիդալը, երեխաների թվի և տարիքային տարբերության որոշման իրավունքը՝ ելնելով մայրական և մանկական առողջության պահպանությունից:

Կանայք ապրում են երկար, իսկ տղամարդիկ՝ ուրախ

Այս կատակի ճշմարտությունը կայանում է նրանում, որ տղամարդկանց ու կանանց մահացության պատճառները տարբերվում են, ըստ այդմ՝ տղամարդիկ կանանցից շատ ավելի հաճախ են մահանում դժբախտ պատահարներից, վնասվածքներից ու վնասակար սովորություններից: Այսինքն՝ սոցիալական առումով իրենց առավել ռիսկային վարքագծի պատճառով նրանք պարզապես չեն հասնում բնական մահվան տարիքի: Բնությունն, ի դեպ, տղամարդկանց և կանանց առողջության հարցերը տարբեր կերպ է լուծել:

Բժշկության հայր Հիպոկրատը պնդում էր, որ կանայք տղամարդկանցից առողջ են, քանի որ կնոջ օրգանիզմի պաշտպանական ուժերը անհամեմատ մեծ են: Այս է վկայում նաև համաշխարհային վիճակագրությունը: Գրեթե ամենուրեք կնոջ կյանքի տևողությունը 4-5 տարով բարձր է, իսկ մահացությունը՝ ցածր: Մանկաբարձ բժիշկները պնդում են, որ նորածնի կյանքին սպառնացող տարբեր ծննդաբերական ախտաբանությունների դեպքում աղջիկները տղաներից ավելի դիմացկուն են և հիվանդություններն ավելի լավ ու հաճախ են հաղթահարում:

Սրա բացատրությունները տարբեր են, սակայն բժիշկները համակարծիք են մի հարցում. ցեղի շարունակության դերը նախասահմանելով կնոջ համար, որը կոչված է կրելու, ծնելու և մեծացնելու ապագա սերնդին, բնությունը լավագույնս հոգ է տարել, որ հուսալիորեն պաշտպանի նրան ամեն կարգի հիվանդություններից՝ օժտելով կայուն իմունիտետով և ուժեղ «ինքնապահպանական ներուժով»: Սակայն միշտ չէ և ամենուր չէ, որ թե՛ կանայք, թե՛ այն հասարակությունը, որում ապրում են նրանք, նպաստում են բնության այս անգին պարգևի պահպանմանն ու բազմապատկմանը: Ավելի շուտ՝ ճիշտ հակառակը:

Բերենք մի քանի օրինակ: Դեռևս 1996 թ. ընդունված բժշկական ծառայությունների մասին առաջին օրենքով Հայաստանում հռչակվեց անվճար ծննդօգնություն, սակայն դա ընդամենը ձևական տուրք էր Առողջապահության համաշխարհային կազմակերպության պահանջներին, իսկ իրականում և՛ կանանց կոնսուլտացիաներում, և՛ ծննբաբերական հիվանդանոցներում կանանցից հսկայական գումարներ էին շորթում: Սա ճակատագրական հետևանքներ ունեցավ: Չունևոր կանայք, ովքեր մեծ թիվ էին կազմում, հղիության ողջ ընթացքում խուսափում էին կոնսուլտացիաներ հաճախելուց՝ այդպիսով հիմնովին քայքայելով սեփական առողջությունը և լուրջ վնաս հասցնելով ապագա երեխաներին: Ոմանք փորձում էին խուսափել անգամ ծննդատներից, որտեղ մուտք գործելը առնվազն 150-300 դոլար էր կազմում: Ստիպված դիմում էին տարբեր հեքիմների ու տատմերերի օգնությանը: Այս ամենը բարձրացրեց մայրական ու մանկական մահացության ցուցանիշները և կործանարար հարված հասցրեց Հայաստանի ծնելիության մակարդակին:

Միայն մեկ տասնամյակի՝ 1992-2002 թթ. ընթացքում երկրում տարեկան ծնելիությունը կրկնակի նվազեց՝ 75 հազարից իջնելով մինչև 35 հազարի նշագիծը: Իրավիճակը հասավ կրիտիկական սահմանին, երբ արդեն անհնար էր հետաձգել շտապ միջոցառումների ձեռնարկումը: 2006 թ. կառավարությունն ընդունեց անվճար առաջնային բժշկական օգնության մասին որոշում, որը կանանց առաջ կանաչ ճանապարհ բացեց դեպի կոնսուլտացիաներ, որտեղ նրանց անվճար կանխարգելիչ ծառայություններ են մատուցվում: Իսկ այս տարվա հուլիսից կառավարությունը հասցեական 1 միլիարդ դրամ հատկացրեց անվճար ծննդօգնության համար: Այսուհետ կոնսուլտացիաներում կնոջը հանձնվում է պետական հավաստագիր, որով նա կարող է ցանկացած ծննդատանը ծննդօգնության բոլոր ծառայությունները անվճար ստանալ:

Սակայն սա լուծում է միայն կանանց խնդիրների մի մասը: Վիճակագրությունը վկայում է, որ կանանց շրջանում մահվան ամենաշատ դեպքերը սրտանոթային և ուռուցքային հիվանդություններից են: Արևմուտքում և ԱՄՆ-ում մամոգրաֆիկ հետազոտությունը համարվում է պարտադիր և անցկացվում է կես տարին մեկ: Մեզանում կանայք հետազոտվում են միայն այն ժամանակ, երբ առաջանում են լուրջ ախտանշաններ ու գանգատներ, իսկ դա նշանակում է, որ հիվանդությունն արդեն չափից ավելի անուշադրության է մատնված է: Հազար կանանց շրջանում անցկացված հարցումից պարզվել է, որ նրանք հետազոտությունից խուսափում են ընտանեկան բյուջեից 10 հազար դրամ պոկելու անհրաժեշտության պատճառով, ինչն իրենց համար բավական շոշափելի է:

Այսպիսով՝ կանանց առողջությանը սպառնացող պատճառների շարքում նյութականը հաստատուն կերպով զբաղեցնում է առաջին տեղը: Սա հատկապես վերաբերում է բազմազավակ ընտանիքներին և անգամ նրանց, ովքեր ընդամենը 1-2 փոքրիկ ունեն: Երեխաներին տրվող նպաստները մեծ չեն, ընտանիքին էական օգուտ է տալիս միայն երրորդ երեխան, բայց ամեն ընտանիք չէ, որ նման համարձակություն է ցուցաբերում:

Շատ կանայք, խուսափելով ևս մեկ երեխա ունենալուց, դիմում են հղիության ընդհատման տարբեր վտանգավոր միջոցների, որոնք ոչ միայն քայքայում են մոր առողջությունը, այլև նպաստում են թերի երեխաներ լույս աշխարհ գալուն: Դրա ապացույցը վերջերս Ալավերդիում տեղի ունեցած ողբերգությունն է, որտեղ մետատրեքսատ օգտագործած մայրերից տարբեր ախտաբանությամբ երեխաներ ծնվեցին:

Մի խոսքով՝ թույլ սեռը, չնայած բարձր կենսունակությանը, որով օժտել է նրան բնությունը, պաշտպանության կարիք ունի: Եվ այդ պաշտպանությունը վերապահված է պետությանը:

Վալերիա ՉԱԽԱՐՅԱՆ

Փաստաշար

Աշխարհը չի հաղթահարում մայրական մահացությունը

Աշխարհում ամեն րոպե հղիության և ծննդաբերության ընթացքում մի կին է մահանում: 10 միլիոն՝ յուրաքանչյուր սերնդում: Մի տարվա ընթացքում կյանքից հեռանում է ավելի քան կես միլիոն կին, նրանց մոտ 1 միլիոն երեխաները մնում են առանց մայրական սիրո ու խնամքի: Ամեն տարի Բնակչության համաշխարհային օրվա նախօրեին ՄԱԿ-ը դիմում է մարդկությանը՝ կոչ անելով ուշադրություն դարձնել այդ սոսկալի վիճակագրությանը: Ընդորում, ասվում է ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բան Կի Մունի ուղերձում, մայրական մահացությունը կարելի է երեք անգամ կրճատել, իսկ երեխաներինը՝ 20%-ով հենց միայն յուրաքանչյուր կնոջ համար, հատկապես հղիության և ծննդաբերության շրջանում, բժշկական ծառայությունները մատչելի դարձնելու միջոցով: Ամբողջ աշխարհում կարելի է խուսափել հղիության արհեստական ընդհատման հետևանքով մահացության ու հաշմանդամության 90%-ից, եթե ամուսնական զույգերին հնարավորություն ընձեռվի օգտվելու արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներից:

Հազարամյակի զարգացման հինգերորդ նպատակը

2000 թ. Հազարամյակի գագաթժողովում աշխարհի առաջնորդներն իրենց առջև նպատակ դրեցին մինչև 2015 թ. 75%-ով կրճատել մայրական մահացության մակարդակը և 60%-ով՝ երեխաներինը: Ութ տարի անց աշխարհի շատ երկրներ նախկինի պես հեռու են առաջադրված նպատակներից:

Հայաստանը մոտենում է եվրացուցանիշների՞ն

Ըստ ՀՀ առողջապահության նախարարության տվյալների՝ Հայաստանում նկատվում է մայրական մահացության գործակցի աստիճանական անկում՝ 2000 թ. 30 դեպքից մինչև 6 դեպք 2007 թ.: Մայրական մահացության գործակիցը կազմում է 15,0 պրոմիլե (100000 կենդանածնի հաշվով), որը համապատասխանում է Արևելյան Եվրոպայի առավելագույն ցուցանիշին:

2050-ին երկրի վրա կապրի 9,3 մլրդ մարդ

Բնակչության համաշխարհային օրը նշվում է ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հանձնարարականով, այն պահից ի վեր, երբ երկրագնդի բնակչության թիվը հատեց 5 մլրդ-ը: Ներկայումս մեր մոլորակում ապրում է 6,67 մլրդ մարդ: Ըստ ՄԱԿ-ի գնահատականների՝ ամեն տարի Երկրի բնակչության թիվը մեծանում է ավելի քան 77 մլն-ով և 2050 թ., ըստ առավել արժանահավատ կանխատեսումների, կկազմի 9,3 մլրդ. մարդ:
Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա, ինչպես հայտարարել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակի ներկայացուցիչ Գարիկ Հայրապետյանը, ըստ ՄԱԿ-ի կանխատեսումների, մինչև 2050 թ. հանրապետության բնակչությունը կկրճատվի 15-20%-ով, ընդ որում հարևան երկրներում տվյալ ցուցանիշը կմեծանա երկու անգամ: Եվ դա ազգային անվտանգության տեսանկյունից լուրջ հիմնախնդիր է:

ԲՈՒԺՎԵՔ ԱՌԱՆՁԻՆ

Տղամարդկանց և կանանց պետք է տարբեր կերպ բուժել

Երբ տղամարդը հեռանում է աշխատավայրից, նրա զարկերակը դանդաղում է, իսկ երբ կինը՝ հաճախանում է: Երեխաներ, տուն, կարիերա, ընտանի կենդանիներ, ամուսին, սեփական անձը. ահա թե ինչն է մտահոգում կնոջը: Եվ հենց այս հաջորդականությամբ: Այս եզրակացությանն են հանգել Ստոկհոլմի Կարոլինյան ինստիտուտի Գենդերային բժշկության կենտրոնի գիտնականները: Ի դեպ, հենց այդ ինստիտուտում է շնորհվում ֆիզիոլոգիայի և բժշկության գծով Նոբելյան մրցանակը:

Գենդերային բժշկության զարգացման անհրաժեշտությունն այսօր ընդունում են ողջ Եվրամիության տարածքում: Իսկ բժշկությունը արականի և իգականի տարաբաժանելու գաղափարը ծնվել է այն բանից հետո, երբ հայտնաբերեցին, որ կանայք տղամարդկանցից ավելի հաճախ են մահանում սրտի վիրահատությունից հետո (հաճախ՝ կորոնար շունտավորումից): Նման տարբերությունների պատճառները պարզ չեն: Հնարավոր է, որ կանանց սիրտը (միայն թե չկարդալ՝ կանացի սիրտը) շատ ավելի փոքր է, քան տղամարդկանց մոտ: Եվ արտան է փոքր, և՛ կորոնար անոթները: Դա դժվարացնում է միջամտությունները և մեծացնում բարդությունների զարգացման վտանգը: Ուրիշ են կանանց մոտ սրտի ռիթմի և դրա խախտումների էլեկտրաֆիզիոլոգիական ցուցանիշները: Պարզվում է, որ դրանք կապված են դաշտանային ցիկլի հետ. այդ կապի մասին նախկինում չէին էլ կասկածում: Ուրիշ է նաև կանանց ուղեղի կառուցվածքը: Եվ առհասարակ տարբեր են ոչ միայն կանանց և տղամարդկանց սեռական, այլև շատ ուրիշ օրգաններ, նույնը չեն նաև այդ օրգանների գործառույթները:

Եվ առողջության հիմնախնդիրներն էլ տարբեր կերպ են ընկալվում: Տղամարդիկ իրենց ինֆարկտի համար մեղավոր են համարում անմիջական պետին: Իսկ կանայք՝ հենց իրենց, թե «չափից ավելի գեր եմ կամ ծխում եմ, քիչ եմ շարժվում, կամ ճնշումիս չեմ հետևում... կամ այդ ամենը միասին»: Եվ ինֆարկտից հետո հիվանդանոցից դուրս գրվելով՝ տղամարդ և կին հիվանդները բնավ նույն առիթով չեն անհանգստանում: Դեղերն էլ կանանց ու տղամարդկանց վրա տարբեր կերպ են ազդում:

Վերջերս Շվեդիայի Ուպսալայի համալսարանի գիտնականները հայտնաբերեցին մի գեն, որը տարբեր սեռերի վրա տարբեր կերպ է գործում: Տղաներն այդ գենով ալկոհոլիկ, դեպրեսիաների ու դեգրադացման հակված անհատականություն դառնալու մեծ վտանգի տակ են: Աղջիկները՝ ընդհակառակը, չափից ավելի դրական զարգացում են ունենում:

ԱԽՏՈՐՈՇՈՒՄԸ՝ ԱՌՈՂՋ Է

«Կենտրոնը ստեղծված է առողջ կանանց համար»

1997-ին ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, իսկ այժմ ԱԳՆ Սփյուռքի հետ կապերի կոմիտեի նախագահ Հրանուշ Հակոբյանը և ամերիկահայ բարերար Ռիթա Պալյանը որոշեցին մամոգրաֆիկ կենտրոն ստեղծել, ներդնել վաղ ախտորոշման փորձը և օգնել հայ կանանց:

ԱՄՆ-ից ժամանած ռադիոլոգները երեք շաբաթվա ընթացքում 20 հայ բժիշկների հետ պարապմունքներ անցկացրին և հետո կենտրոնում աշխատելու համար մրցութային կարգով ընտրեցին չորսին: Այսպես ստեղծվեց Մամոգրաֆիկ կենտրոնը՝ ներկայիս Հայ-ամերիկյան առողջության կենտրոնը: Խաչանուշ Հակոբյանի՝ կենտրոնի տնօրենի խոսքերով՝ այստեղ ամեն տարի 13-15 հազար կին է հետազոտվում: 1997 թ. ի վեր անցկացվել է 150 հազ. հետազոտություն և 4280 կնոջ մոտ կրծքագեղձի քաղցկեղ է հայտնաբերվել: Բայց քանի որ շուրջ 800 կին հետազոտություն է անցել կանխարգելիչ նպատակներով, ուռուցքը հայտնաբերվել է վաղ փուլում և հեռացվել է: Սակայն հանդիպում են նաև հիվանդության բարձիթողի դեպքեր...

- Ի՞նչ չափերի նորագոյացություններն է հնարավոր հայտնաբերել ձեր սարքավորումներով:

- Ուռուցքը կարող է արձանագրվել բջջային մակարդակում՝ ամենավաղ փուլում: Այդ գոյացությունը կարող է լինել բրնձի հատիկի չափ: Այս փուլում այն անհնար է շոշափել, և կինը դեռևս ոչ մի ախտանշան չի զգում: Փաստորեն մեզ հաջողվել է փրկել այն կանանց կյանքը, ովքեր եկել են կանխարգելիչ հետազոտության, և ուռուցքը հայտնաբերվել է ժամանակին: Նրանք չեն կորցրել կուրծքը և չեն ենթարկվել լուրջ վիրահատական միջամտության:

Այսօր մամոգրաֆիան կրծքագեղձի քաղցկեղի վաղ փուլում հայտնաբերման միակ եղանակն է: Բարեբախտաբար Հայաստանում կանանց 20 տոկոսն արդեն գալիս է հետազոտվելու հենց այնպես՝ կանխարգելիչ նպատակներով: Կարևոր է, որ յուրաքանչյուր հայ կնոջ համար այդ հետազոտությունը սովորություն դառնա: Սակայն, ցավոք, մեր կանայք գալիս են երկրորդ, երրորդ փուլում, երբ հիվանդությունը արմատներ է տվել և անուշադրության մատնվել, երբ արդեն ոչ մի երաշխիք չկա, որ հնարավոր է կնոջ օրգանը փրկել: Ի դեպ, երրորդ, չորրորդ փուլում խոսքն արդեն կնոջ կյանքը փրկելու մասին է:

- Ամեն կին չէ, որ կարող է իրեն ստիպել գնալ հետազոտվելու, հնարավոր է՝ վախից... Այս 11 տարիների ընթացքում փոխվե՞լ է արդյոք հայ կանանց հոգեբանությունը:

- Այո՛, իրոք, մեր կանայք հենց այդպես էլ մտածում են. ավելի լավ է հետազոտվելու չգնալ և չիմանալ ճշմարտությունը: Կանանց այս ջայլամային քաղաքականությունը ոչ մի լավ բանի չի հանգեցնի: Մինչդեռ գոյություն ունի ընդունված նորմ. 35-ից հետո կինը պետք է ռենտգենաբանական հետազոտության ենթարկվի, իսկ 40-ից հետո՝ տարին թեկուզ մեկ անգամ ուղղակի հետազոտվի: Ցավոք, մեզ մոտ են գալիս կանայք, ովքեր արդեն առողջության հետ կապված լուրջ խնդիրներ ունեն: Մինչդեռ կենտրոնը ստեղծված է առողջ կանանց համար:

- Հայտնի է, որ այսօր Ամերիկայում այսպիսի մամոգրաֆիկ հետազոտությունը արժի 600 դոլար: Ի՞նչ գներ են այստեղ:

- Մենք կատարում ենք նույն մակարդակի հետազոտություն, ինչ Ամերիկայում: Սակայն հետազոտության վարձը ընդամենը 11 հազար դրամ է: Ընդ որում, որպես կանոն, օրական մոտ 10 կին հետազոտվում է անվճար՝ սոցիալական արտոնությունների շրջանակներում:

Ամեն տարի հոկտեմբերին՝ Կենտրոնը բացվելու օրից, մենք ՀՀ առողջապահության նախարարության և հասարակական կազմակերպությունների (Հայաստան, ԱՄՆ) հետ համատեղ, հայտարարում ենք «Կրծքագեղձի քաղցկեղի նկատմամբ զգոնության» միամսյակ: Այդ ամսվա ընթացքում ծառայությունների վարձը կրկնակի նվազում է, իսկ որոշակի կատեգորիաներ ընդհանրապես անվճար են հետազոտվում՝ տարբեր կարգի հաշմանդամությամբ կանայք, ազատամարտիկների կանայք և այլն:

- Արտասահմանում ընդունված է, որ բժիշկը հաճախորդին բացահայտ ասի նրա հիվանդության մասին: Մեզանում, ինչպես հայտնի է, ոչ, ինչո՞ւ:

- Մենք երբեք հիվանդին չենք ասում, որ կրծքագեղձի քաղցկեղ ունի: Ամեն կին չէ, որ կարող է դիմանալ այդ լուրին: Թեպետ մեղավորը հենց ինքն է: Ամերիկայում յուրաքանչյուր կին տարեկան մեկ անգամ գնում է հետազոտվելու, կնշանակի՝ հաստատ գիտի, որ մեկ տարվա ընթացքում ուռուցքը չի կարող վտանգավոր չափերի հասնել: Քանի որ մեզանում սեփական առողջության հարցում նման հոգատարության «մշակույթ» դեռևս գոյություն չունի, հայ կնոջ համար այդ դաժան ախտորոշումը կարող է անակնկալ ու լուրջ ցնցում լինել: Ուստի խուսափում ենք այն հրապարակելուց: Տեղյակ ենք պահում միայն հիվանդի ազգականներին:

- Ձեզ մոտ, ինչպես երևում է, շենքի վերակառուցման աշխատանքներ են ընթանում: Նշանակում է՝ պետք է «ընդարձակվե՞ք»:

- Այո՛, մտադիր ենք ընդլայնել մեր ծառայությունների ցանցը. ընդլայնել տարբեր օրգանների չարորակ հիվանդությունների լիարժեք ախտորոշման ռադիոլոգիական ծառայությունը, կազմակերպել ուրոլոգիական ծառայություն և սկսել շագանակագեղձի քաղցկեղի սքրինինգ, որը փաստորեն հանրապետությունում չի կատարվում:

Զրույցը վարեց
Կարինե Ամիրխանյանը

ԹԵԺ ԳԻԾ

Պապրա՞սի ենք չվճարել ծննդաբերության համար

Ինչքան ինձ հիշում եմ, ծննդօգնությունը մեր երկրում միշտ անվճար է եղել, սակայն ծառայությունները ծննդատներում մնում էին վճարովի: Այս տարվա հուլիսից ներդրվել է ծննդյան սերտիֆիկատների համակարգը, պետությունը 1 մլրդ դրամ է հատկացրել ծննդօգնության համար, իսկ եկող տարվա հունվարին այդ գումարը կբարձրանա մինչև 4 մլրդ: Բնական է՝ այդ նորարարության արդյունքների մասին դեռ վաղ է խոսել: Անհանգստացնում է ուրիշ բան. չլինի՞ թե օրենքը հերթական անգամ շրջանցվի:

Մտավախությունը զուր չէ, քանի որ կանայք խորապես հավատացած են, որ եթե սկսեն իրենց իրավունքները պահանջել և օրենքից խոսել, ապա անպայման իրենց կամ երեխայի առողջությունը կվտանգվի: Այսպես, Հայաստանի մայրության կենտրոնի (ղեկավար՝ Սուսաննա Ասլանյան) հարցախույզը ցույց է տվել՝ գրեթե բոլոր հարցվածները լավատեղյակ են, որ ծննդաբերությունն անվճար է, բայց և այնպես պատրաստ են որոշակի գումար վճարել: Ավելին, կազմակերպությունում վերջերս տեղի ունեցած մի դեպքի մասին պատմեցին: Իրենց թեժ գծով զանգահարել էր մի կին և խնդրել աջակցել, քանի որ իր աղջկանից, որը պատրաստվում էր ծննդաբերել, գումար էին կորզում: Տեղյակ պահեցին առողջապահության նախարարությանը, միջոցներ ձեռնարկվեցին, և ծննդաբերությունը հաջող անցավ: Այնուամենայնիվ,ողող ծննդկանին դուրս գրելիս հաջողացրել էին գումար գանձել...

Մայրության ֆոնդում ինձ բազմաթիվ գրավոր վկայություններ ցույց տվեցին, որոնք նույն բանն էին հաստատում: Օրինակ՝ կնոջը, որին կանանց կոնսուլտացիայից արյունահոսությամբ ծննդատուն էին հասցրել, հրաժարվում էին որևէ օգնություն ցույց տալ, քանի դեռ նա պահանջվող գումարը չէր վճարել: Միամտություն կլինի կարծել, թե սերտիֆիկատների ներդրումից հետո բողոքները միանգամից կդադարեն, և բոլոր թերությունները հօդս կցնդեն: Կամ մի ամսվա ընթացքում կհաղթահարվեն տասնամյակներ շարունակ ձևավորված և գրեթե ավանդույթի ուժ ստացած վատ սովորությունները: Բայց սկսելը անշուշտ պետք էր: Եվ դա հավասարապես վերաբերում է երկու կողմին՝ և՛ ովքեր վերցնում են, և՛ ովքեր պատրաստ են վճարել... Իսկ նրանց համար, ովքեր չեն հաշտվում արատավոր գործելակերպի հետ, առաջարկում ենք օգտվել շուրջօրյա հեռախոսային թեժ գծերից.

Հայաստանի մայրության կենտրոն՝
28 35 75
Առողջապահության նախարարություն՝
52 88 72

Կ. Ա.

ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐՆ ԻՆՉՊԵՍ ՈՐ ԿԱՆ

Փնտրվում են 60 միլիոն կորած կանայք

«Փնտրվում են 60 միլիոն կորած կանայք»,- ազդարարում են պաստառները, որոնցով հնդկուհիները դուրս են գալիս փողոց՝ ընդվզելով այն հղիությունների արհեստական վիժեցումների դեմ, որոնց պտուղը իգական սեռի է: 1947 թ. Հնդկաստանի անկախություն ձեռք բերելուց ի վեր այն չծնված երեխաների թիվը, որոնցից հրաժարվել են մինչև ծնվելը սոսկ այն պատճառով, որ աղջիկ են եղել, կազմում է 60 մլն.:

«Այստեղ երեխայի սեռը մինչև նրա ծնվելը չեն որոշում: Դա պատժվում է»,- հայտարարում է Max Hospital-ի՝ Հնդկաստանի առավել հեղինակավոր մասնավոր հիվանդանոցներից մեկի մուտքին փակցված ազդագիրը: Կառավարության այդ միջոցառումն ուղղված է աղջիկ երեխաների արհեստական վիժեցման կանխարգելմանը:

Հնդկաստանում և Չինաստանում ընտրովի աբորտները հանգեցրել են սեռերի անհավասարակշռության: ՄԱԿ-ը զգուշացնում է, որ այս տարածաշրջանում պակասում է 136 մլն կին: «Դա տղա երեխա ունենալու ավանդական նախապատվության և աղջիկների արհեստական վիժեցման հետևանք է»,- բացատրում է ՄԱԿ-ի վերլուծական հետազոտության հեղինակ Քրիստոֆ Գիլմոտոն: Այդ գործելակերպը տարածում է գտել 1980-ական թթ.՝ ՈՒՀՀ-ի երևան գալուց հետո:

Հնդկաստանը և Չինաստանը՝ այդ երկու ասիական հսկաները, որոնց բնակչությունը հատել է 1 մլրդ-ի սահմանագիծը, ընտրովի աբորտների հետևանքով Ասիայի «մասկուլինացման» առավել վառ օրինակներն են:

Չինաստանի Ժողովրդագրական քաղաքականության պետական կոմիտեի գնահատականներով՝ գենդերային անհավասարակշռությունն այս երկրում, որտեղ ներկայումս ամուսնական տարիքի տղամարդկանց թիվը կանանցից 18 մլն-ով ավելի է, կպահպանվի և անգամ կսաստկանա: Կոմիտեի կանխատեսմամբ՝ 2020-ին 20-45 տարեկան տղամարդկանց թիվը 30 մլն-ով կգերազանցի կանանց:

Անհավասարակշռությունը բացատրվում է երկու գործոնի ազդեցությամբ. Չինաստանում ծնելիության գործող սահմանափակումներով և երկրի ավանդական մշակույթով, ըստ որի՝ ընտանիքի համար գլխավորը տղա մեծացնելն է: Այս ժողովուրդը տղա զավակի բացակայությունը համարում է մեծ անհաջողություն: Բացի դրանից, տնտեսական դժվարին պայմանները Չինաստանի գյուղական շրջաններում պահանջում են հատկապես տղամարդկային աշխատուժ:

Ուստի Չինաստանում հազվադեպ չեն երեխայի «անհաջող» սեռի պատճառով աբորտները, չնայած այն հանգամանքին, որ երկրում գործում են օրենքներ, որոնք խստագույնս պատժում են ընտրովի աբորտները: Նման արարքների համար զանցառուներին սպառնում են մեծ տուգանքներ և վարչական պատժամիջոցներ: Բայց եթե անգամ աղջիկներին հաջողվում է լույս աշխարհ գալ, շատ ընտանիքներում նրանց աննախանձելի կյանք է սպասում: Չինաստանում աղջիկ երեխաների շրջանում մահացությունն ավելի բարձր է, քան տղաների: Պատճառներից մեկն անփույթ վերաբերմունքն է աղջիկների առողջության նկատմամբ: Նման միտումը վերացնելու համար Չինաստանում արդեն մի քանի տարի լայնածավալ քարոզարշավ է տարվում, որը շեշտում է աղջիկների «օգտակարությունն» ու «անհրաժեշտությունը»: Որոշ շրջաններում քարոզարշավն ուղեկցվում է նյութական խթաններով:

Ուշագրավ է, որ ՄԱԿ-ի նշված հետազոտությունում այն երկրների շարքում, որտեղ 100 աղջկա դիմաց ծնվում է առնվազն 108 տղա, հիշատակվում են Վրաստանը, Հայաստանը և Ադրբեջանը: Իհարկե, համեմատած Չինաստանի և Հնդկաստանի որոշ շրջանների հետ, որտեղ 100 աղջկա դիմաց ծնվում է ավելի քան 120 տղա, այստեղ հիմնախնդիրն այնքան էլ սուր չէ: Ընդ որում, ըստ մասնագետների, հետագայում տղա երեխաների ավելի բարձր մահացության պատճառով այդ տարբերությունը վերանում է: Բայց դա չի նշանակում, որ Հայաստանում ընտրովի աբորտների հիմնախնդիր գոյություն չունի:

- Երեխայի սեռը արդեն գիտե՞ք:
- Այո՛, աղջիկ է լինելու:
- Դե լավ, ոչինչ, մի տխրիր, հաջորդը անպայման տղա կլինի:

«Իսկ եթե ոչ, մի՞թե դա ցավակցություն հայտնելու պատճառ է»,- գրում է մեր ընթերցողներից մեկը՝ ներկայացնելով ծանոթ և անծանոթ մարդկանց արձագանքների իր դիտարկումների արդյունքները: Այդ թվում բավական ուշագրավ օրինակ՝ երբ ամուսինը հրաժարվել է ծննդատնից տուն տանել երրորդ աղջիկը ունեցած կնոջը...

Պատրաստեց
Հասմիկ Հարությունյանը

Փորձագետի այունակ

«Ցածր ինքնագնահատականը» կարող է վտանգել ձեր առողջությունը

Մի ժամանակ սթրեսները համարվում էին բացառապես միջին տարիքի աշխատող տղամարդկանց «մենաշնորհը»: Նոր ժամանակների ռիթմերը դրանց նոր տարատեսակներ բերեցին՝ բացառապես կանանց բնորոշ սթրեսներ: Ու այս ամենն այն պատճառով, որ ժամանակակից հասարակությունը կանանց հակասական պահանջներ է ներկայացնում և նրանց պետք է համապատասխանել: Կանայք պետք է գրավիչ լինեն, սակայն ոչ անպարկեշտ, պետք է ընտանիք ունենան, սակայն ավելի շատ ուշադրություն նվիրեն աշխատանքին, պետք է աշխատեն, սակայն միաժամանակ չպետք է մոռանան տան մասին, պետք է համառ լինեն, սակայն պահպանեն համեստությունը: Մի խոսքով՝ կինը շարունակ գործ ունի անվերջանալի «պետք է»-ների հետ:

Սթրեսի ազդեցությունը, մասնագետների գնահատականներով, ավելի սուր են զգում լրիվ աշխատանքային օրն զբաղված, մինչև 12-13 տարեկան երեխա ունեցող կանայք: Սակայն կանանց գանգատները՝ կարճ գլխացավերից մինչև խուճապային վախի նոպաները, որպես կանոն, այնքան լուրջ ուշադրության չեն արժանանում, որքան տղամարդկանց դեպքում: Վերջիններիս նման ախտանշանների առկայության պարագայում մանրակրկիտ հետազոտում են, ի դեպ, ճիշտ էլ անում են, իսկ կանանց մեծ մասամբ հանգստացնող միջոցներ են նշանակում և խորհուրդ տալիս հանգստանալ:

Մինչդեռ այսպես կոչված «սովորական սթրեսը» կարող է առաջացնել դիաբետ, հիպերտոնիա, սրտի նոպաներ և ինֆարկտ, դեպրեսիա և անքնություն: Վիճակագրական տվյալները վկայում են, որ դեպրեսիայի ցուցանիշները կանանց շրջանում 2 անգամ բարձր են, քան տղամարդկանց: «Ստամոքսի խոցն առաջանում է ոչ թե նրանից, թե ինչ եք ուտում, այլ թե ինչն է ձեզ ուտում»,- պնդում էր Մոնտենը:

Եթե մարդու մեջ առաջանում է մշտական ինքնադժգոհության զգացում, որը ելք չի գտնում և ստիպում է նրան ամեն օր «կուլ տալ վիրավորանքը», ապա դա հանգեցնում է հիպերտոնիայի: Ցածր ինքնագնահատականը, որը, մի կողմից, ուղեկցվում է չափից ավելի խոցելիությամբ, մյուս կողմից՝ չափազանց պահանջկոտությամբ սեփական անձի հանդեպ, ի վերջո բերում է խոցի, ավելին անելու ձգտումը, քան իրականում հնարավոր է, առաջացնում է ուժեղ ներքին տագնապ:

Պարադոքս է, բայց փաստ. հենց աշխատանքն է օգնում կնոջը պաշտպանվել դեպրեսիայից, ընդ որում, կարևոր չէ՝ բավականություն պատճառո՞ւմ է այն, թե՞ ոչ: Կարելի՞ է ուրեմն պնդել, որ դեպրեսիայի ավելի քիչ են հակված աշխատող կանայք: Անշուշտ:

Դրա հետ մեկտեղ հաջող ամուսնացած կանայք ավելի քիչ են ենթակա սթրեսների աշխատանքի վայրում, քան չամուսնացածները և նրանք, որոնց ամուսնությունը ոչ մի ուրախություն չի բերում: Մյուս կողմից Եթե աշխատանքը ծանծրալի ու ծանր է, հոգնածությունը շատ արագ է վրա հասնում, նույնիսկ հանգիստը արդյունք չի տալիս: Անտարբերությունը և, առավել ևս, աշխատանքի նկատմամբ բացասական վերաբերմունքը նույնիսկ ագրեսիայի բռնկումներ է առաջացնում: Իրենց աշխատանքը սիրող մարդիկ ավելի քիչ են հոգնում, հեշտ են հաղթահարում դժվարությունները, իսկ դրական հույզերը վարակում են շրջապատը ու հարազատներին՝ ստեղծելով կենսուրախ մթնոլորտ: Նույնը ի դեպ վերաբերվում է տղամարդկանց:

Հայ կինը ծանրաբեռնված է անթիվ-անհամար պարտականություններով, երեխաների, ամուսնու, ծնողների խնամքի հոգսերով: Բարդելով իր ուսերին նորանոր պարտականություններ՝ նա մեղքի զգացում է ունենում՝ համարելով, որ պետք է անպայման բոլոր գործերը հասցնի: Բայց պետք է սովորել հոգ տանել նաև սեփական անձի մասին: Ժամանակն է ինքզինքը հարց տալ. «Արդյոք իմ ցածր ինքնագնահատականը չէ՞ պատճառը, որ ես, ամեն ինչի համար ինձ մեղադրելով, փորձում եմ ամեն գնով ամեն ինչից գլուխ հանել: Արդյոք չափից ավելի թանկ չե՞մ վճարում կրկնակի, երբեմն էլ եռակի ծանրաբեռնվածության համար»:

Մի խոսքով՝ եթե ցանկանում ենք բարեհաջող լուծել բոլոր խնդիրները, առաջնայինը պետք է լինի սեփական ֆիզիկական ու հոգեկան առողջության մասին հոգ տանելը: «Այ թե ինչպիսին պետք է լինեմ» ասելու փոխարեն պետք է ասել. «Ա՛յ այսպիսին եմ ես»: Եվ հիմք ընդունել իրականությունը, ոչ թե իդեալը...

Ասյա Բերբերյան
Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի հոգեբանության ֆակուլտետի դեկան

Անպտղության մակարդակը՝ թույլատրելիի շեմից անդին

Հայաստանում ամուսնական զույգերի անպտղության մակարդակը, ըստ վերջին տարիներին անցկացված հետազոտությունների տվյալների, 32%-ի է հասնում, և այդ ցուցանիշը, Առողջապահության ոլորտում ծրագրերի իրականացման գործակալության տնօրեն Սերգեյ Խաչատրյանի խոսքերով, 2 անգամ գերազանցում է Առողջապահության համաշխարհային կազմակերպության (ԱՀԿ) սահմանած կրիտիկական շեմը՝ 15%-ը: ԱՀԿ-ն անպտղությունը համարում է երկրի ժողովրդագրական իրավիճակի վրա ազդող հիմնական գործոն՝ նշելով, որ անպտղության դեպքերի մեկ երրորդը ամուսնալուծության պատճառ է դառնում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ ամուսնական զույգերի 4%-ը առաջնային անպտուղ է, իսկ 28%-ի մոտ երկրորդային անպտղություն է հայտնաբերվել (այսինքն՝ զույգն անպտուղ է դարձել առաջին երեխայի ծնվելուց հետո): Հայաստանում ամուլ զույգերի թիվը, որոնք արհեստական բեղմնավորման կարիք ունեն, տարեկան կազմում է ավելի քան 5 հազար, սակայն մինչև հիմա այդ գործողությունն անցել է մոտ 800 ամուսնական զույգ:

Հայաստանում անպտղության ախտորոշման և բուժման և վիրահատական (էնդոսկոպիկ) վերարտադրաբանության տարածաշրջանային կենտրոն ստեղծելու ծրագիրը կնպաստի Հայաստանում ծնունդների թիվը տարեկան 3-4 հազարով մեծացնելուն, կկրճատի ամուսնալուծության գործընթացները և բնակչության բուժծառայությունների հետ կապված ընդհանուր ծախսերը կնվազեցնի 40%-ով: Ծրագրի արժեքը 616 մլն դրամ է (մոտ 2 մլն 35 հազ. ԱՄՆ դոլար): Այդ մասին ասվեց հուլիսին Հայաստանի վարչապետի մոտ տեղի ունեցած քննարկման ժամանակ, որին մասնակցում էին երկրի առաջատար բուժհաստատությունների և բուհերի ղեկավարները:

Ռիսկի գոտի

Աբորտների 5%-ը կատարվում է աղջիկ չցանկանալու պատճառով

Ժողովրդագրական հետազոտությունները առողջապահության ոլորտում, որ կատարել է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի հայաստանյան գրասենյակը, ցույց են տվել, որ Հայաստանում 52% ծննդաբերությունների դիմաց աբորտները կազմում է 48%, իսկ ըստ առողջապահության նախարարության տվյալների՝ ընդամենը 7%, այսինքն՝ տարբերությունն ավելի քան 7 անգամ է: Այս տարբերությունը միանգամայն բացատրելի է, արձանագրվում են ոչ բոլոր աբորտները, քանի որ դրանք եկամտի աղբյուր են: Այսուհանդերձ, ըստ հարցման արդյունքների, աբորտների ընդհանուր թվի մոտ 5%-ը կատարվում է աղջիկ երեխա չցանկանալու պատճառով, եթե մանավանդ ընտանիքում այդ երեխան երկրորդն է կամ հերթական իգական սեռը:

Փոքր աղջիկների մեծ գաղտնիքները

Դստեր վերարտադրողական ֆունկցիաների մասին մայրիկների մեծ մասը հիշում է այն ժամանակ, երբ նա ամուսնանալու շեմին է, այսինքն՝ 22-23 տարեկան է: Այդ տարիքում հաճախ հիվանդությունները խորացած են լինում, և բուժումը խիստ դժվարանում է: Մայրերի անտարբերությունը դուստրերի վերարտադրողական առողջության նկատմամբ հարաճուն անպտղության պատճառներից մեկն է: Բայց, ավաղ, ոչ բնավ վերջինը:

Թիվ 1 հիվանդանոցի մանկական գինեկոլոգիայի բաժնի վարիչ Ռաֆաիդա Սարգսյանի կարծիքով՝ վերջին ժամանակներս բնածին արատների չափազանց արագ դինամիկա է նկատվում, հատկապես աղջիկների օրգանիզմի առնականացման: Վերջերս այդպիսի մի աղջնակ հիվանդանոց բերեցին: Բազմակողմանի հետազոտությունից հետո միայն հայտնաբերվեց, որ նա գենետիկ կանացի կոդ ունի: «Այս տարի նման 4 դեպք է արձանագրվել,- ասում է Ռ. Սարգսյանը,- դա շատ-շատ է: Օրինակ՝ նախկինում 10 հազար ծնունդին ընկնում էր մեկ նման անոմալիա»: Մի երեխայի արդեն վիրահատել են, մյուսները սպասում են իրենց հերթին:

Հիվանդությունների մեծ մասը հատկապես հակաբիոտիկների տարերային օգտագործման հետևանք է, որ հանգեցնում է սնկային հիվանդությունների: Կտրուկ ավելացել է կենտրոնական կարգավորող մեխանիզմների ֆունկցիաների խախտումներ ունեցող փոքրիկների թիվը: Պատճառը նյութական-կենցաղային վատ պայմաններն են, ոչ լիարժեք սնունդը և սթրեսները:

Ցավոք, Ռ. Սարգսյանի խոսքերով, եթե անգամ աղջիկները լսել են ալկոհոլի, ծխախոտի, չասենք արդեն թմրադեղերի վնասների մասին, ապա հեգնանքով ու քամահրանքով են վերաբերվում դրան: Իսկ դեռատի հայրենակցուհիների նիհարելու մոլուցքը, իր կարծիքով, արդեն հասել է շիզոֆրենիայի աստիճանի: Բժշկության ոլորտի մեծ մտածողները բազմիցս են ասել, որ դիետաները շատ ավելի վնասակար են առողջության համար, քան ճարպակալումը: Բայց այդ խոսքերը չեն հասնում հասցեատերերին: Այդ ծանր ախտահարումները հանգեցնում են անդառնալի հետևանքների և շատ հաճախ՝ ամլության:

Վաղ սեռական կյանքն անդրադառնո՞ւմ է աղջիկների մանկածնության ֆունկցիաների վրա:

Անկասկած, այո, ասում է զրուցակիցս ավելացնելով, որ այդ աղջիկներն իրենց հազվադեպ են դիմում. «Կարծում եմ՝ նրանք, ովքեր դեռ չհասունացած բռնել են այդ վտանգավոր ուղին, իրենց տանիքն ունեն, իրենց բժիշկները, որոնք հաճախ ցածր որակավորում ունեն»: Դեռատի աղջիկների համար իսկական ողբերգություն են դառնում վաղ աբորտները: Ռ. Սարգսյանի կարծիքով՝ պաշտոնական վիճակագրությունը չի արտացոլում իրերի իսկական դրությունը: Իսկ վերջին ժամանակներս աղջիկները սկսել են ավելի հաճախ դիմել այսպես կոչված անարյուն աբորտներին, այսինքն՝ հաբերին: Դրանցից հետո, որպես կանոն, նրանց հիվանդանոց են բերում ծանր բարդություններով:

Մանկական գինեկոլոգիայի բաժանմունք տարեկան 500 հաճախորդ է այցելում, բայց դա միայն այսբերգի երևացող մասն է: Նրանք, ովքեր այդպես էլ բժիշկներին չեն հասնում, շատ ավելի մեծ թիվ են կազմում: Բայց չէ՞ որ խաղասեղանին ոչ միայն նրանց առողջությունն է դրված, այլև մայրանալու անգին հնարավորությունը:

Մարիետա ՄԱԼՈՒՄՅԱՆ

Ծխե՞լ, թե չ՚ծխել

Ծխախոտի գերուհիները

Երևանի ռեստորաններում ծխում են այնքան, որքան չեն ծխում անգամ Լոնդոնի ակումբներում: Ընդ որում, այս իմաստով գեղեցիկ սեռը բնավ չի զիջում ուժեղ սեռին. չէ՞ որ ծխելը մոդայիկ է: Մի՛ գայթակղվեք, գուցե ժամանակին այդպես էր, բայց ոչ այսօր: Այժմ սիգարետն այլևս հմայք չի հաղորդում, ծխելը համարվում է անբարեկրթության նշան, թույլերի և անհաջողակների, մեծ մասամբ՝ չամուսնացած կանանց թուլություն: Այս են վկայում վիճակագրությունն ու մասնագետները: Ապացուցված է նաև, որ ծխելու ամենամոլի սիրահարները կանայք են: Իրենց հուզականության պատճառով նրանք շատ հեշտ են մոլի ծխող դառնում և, դա դժվարությամբ են թողնում:

Այս տխուր փաստը հաստատում են նաև սոցիոլոգիական հետազոտությունները: Անցյալ տարվա տվյալներով՝ Հայաստանում ծխող տղամարդկանց տոկոսը նվազել է, կանանց շրջանում՝ աճել: Իսկ վերջին տարիների միտումը վկայում է թեկուզև դանդաղ, բայց անշեղ աճի մասին: Հնարավոր է՝ ծխող կանանց 3-5 տոկոսը այնքան էլ շատ չէ եվրոպացիների համար, սակայն մեր մտածելակերպով ժողովրդի համար դա լուրջ ցուցանիշ է: Նախորդ տարիների համեմատությամբ տարբերությունն այն է, որ ծխելը դարձել է տեսանելի. եթե նախկինում աղջիկները թաքցնում էին վնասակար սովորությունը, ապա հիմա բացահայտ ծխում են: Ու դա տպավորություն է ստեղծում, թե ծխողներն ավելի շատ են, քան չծխողները:

Նույն այդ հետազոտությունների համաձայն՝ ծխող կանանց մեծ մասն ապրում է մայրաքաղաքում: Տեսականորեն գոյություն ունի կանանց երկու խումբ՝ գյուղական չծխողներ և մայրաքաղաքի ծխողներ, սակայն մասնագետները չեն բացառում, որ ծխող կանանց թիվը մարզերում տարիների ընթացքում կաճի: Այս մտավախությունները հիմնավորվում են բալթյան և եվրոպական երկրների փորձով: «Այնպես որ այսօր պետք է ամեն ինչ անել, որպեսզի չծխող աղջիկները ժամանակի ընթացքում չհրապուրվեն ծխախոտով»,- ասում է առողջապահության նախարարության հակածխախոտային ծրագրի համակարգող, բժշկական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Բազարջյանը: Նույն այդ վիճակագրության համաձայն՝ Հայաստանում կանայք, որպես կանոն, սկսում են ծխել դպրոցն ու նույնիսկ բուհն ավարտելուց հետո: Ծխող կանանց առավել տարածված տարիքային խմբերը՝ 25-ից մինչև 55 տարեկան են:

«Առողջապահության նախարարությունը զգուշացնում է՝ ծխելը վտանգավոր է ձեր առողջության համար»: Այն կանանց շրջանում, ովքեր իրենց չեն պատկերացնում առանց ծխախոտի, այս նախադասությունը ժպիտ է առաջացնում: Իսկ եթե տուփի վրա գրվեր, որ վնասաբեր նիկոտինը վատացնում է մաշկի ու մազերի վիճակը, զզվելի դարձնում շնչառությունը, առաջացնում ատամների և լնդերի հիվանդություններ, կոշտացնում ձայնը, որ դրանից ատամներն ու եղունգները դեղնում են, առաջանում են հանգիստ չտվող հազ և վաղ կնճիռներ, դա գուցե և ավելի արդյունավետ գործեր կանանց պարագայում: Ծխախոտի գերուհու համար ծխելը թողնելը երբեմն անհնար է, նույնիսկ մահվան սպառնալիքի տակ, և միայն գեղեցկությունը կորցնելու վախը կարող է հրաշքներ գործել:

Նորա Կանանովա

Լոս Անջելեսի Գերագույն դատարանը իր որոշմամբ ստիպեց «Philip Morris»-ին աննախադեպ մեծ փոխհատուցում վճարել մասնավոր հայցի դիմաց՝ 28 մլրդ ԱՄՆ դոլար: Փողը ստացավ թոքերի քաղցկեղով տառապող մի կին՝ 64-ամյա Բետտի Բուլոկը, որը պնդում էր, որ ծխել է շատ ավելի մեծ քանակությամբ սիգարետ, քանի որ «Philip Morris»-ը թաքցրել է ծխելուն հետևող վտանգները:

Դատարանը «Philip Morris» ընկերությանը մեղավոր ճանաչեց մեքենայությունների, անփութության և ծխելու վնասների մասին տեղեկատվությունը թաքցնելու համար, ինչն էլ հանգեցրել է Բուլոկի հիվանդությանը:

Գեղեցիկը կկործանի՞ աշխարհը

Ո՞վ կփրկի հայուհիներին գեղեցկության կարծրատիպերից

Գեղեցիկ լինելու մոլուցքը, որի մասին ահազանգում են արևմտյան հոգեբանները, չի շրջանցել նաև հայուհիներին: Մի տարբերությամբ միայն. որքան էլ նրանք համակված են սեփական մարմինը կատարելության հասցնելու ձգտումով, այնուամենայնիվ, քչերն են այդ մղումը հասցրել հիսթերիայի աստիճանի: Պլաստիկ վիրաբույժները վստահեցնում են՝ մոլագար հաճախորդները (ովքեր վիրահատական սեղանին են պառկել մի քանի անգամ) խիստ սակավ են, իսկ կազմվածքը գեթ մեկ անգամ և, ինչպես հույս ունեն, մեկընդմիշտ շտկել ցանկացողները՝ շատ:

Չնայած հայուհիների զսպվածությանը՝ բազմաթիվ բժիշկներ ենթադրում են. «Եթե հասարակությունը պահպանողական չլիներ, թերևս Հայաստանում էլ մի սարսափելի բան սկսվեր»: Պլաստիկ վիրաբույժների կարծիքով՝ մեր կանանց կաշկանդում է ոչ այնքան տնտեսական գործոնը, որքան հասարակական կարծիքը: Ամուսնացած տիկնանց համար որոշիչը ամուսնու կարծիքն է, չամուսնացածներին հետ են պահում ասեկոսեները և խեթ հայացքները: Վիրահատության գինը շատերի համար երկրորդական հարց է: Օրինակ՝ վերջին տասը տարիների ընթացքում որոշ կլինիկաներում կրծքի պլաստիկ վիրահատությունների թիվը մեծացել է 10 անգամ, և կարելի է եզրակացնել, որ դիմողները փողի խնդիր չունեն: Զարմանալի չէ. Հայաստանում պլաստիկ վիրահատություններն անհամեմատ ավելի էժան են, քան Եվրոպայում կամ Մոսկվայում: Հայկական «գեղագիտությունը» միջին հաշվով 500-800 դոլար արժի, Ռուսաստանում 8-10 անգամ ավելի թանկ, Ամերիկայում տարբերությունն անգամ 10-15-ապատիկի է հասնում: Ահա ինչու երևանյան կլինիկաներում արտասահմանում ապրող հայ կանանց ներհոսք է նկատվում: Հայաստանյան գրանցումով կանայք էլ քիչ չեն վիրահատվում: Միայն 8-րդ կլինիկական հիվանդանոցի պլաստիկ և վերականգնողական վիրաբուժության բաժանմունքում ամեն օր 5-8 վիրահատություն է կատարվում: Մինչդեռ այդպիսի բաժանմունքներ են բացել մայրաքաղաքում գործող գրեթե բոլոր հիվանդանոցները: Ու սա, ինչպես երևում է, ընդամենը սկիզբն է...

Վերոնշյալ բաժանմունքի վարիչ Կարեն Դանիելյանը պատմում է, թե ինչպես մի քանի օր առաջ իրեն է դիմել մի կին, որը տենչում էր իր կրծքի չափսերը հասցնել հնարավոր առավելագույնին: Խոսքը 600-միլիլիտրանոց իմպլանտի մասին էր, որը ծանր բեռ կդառնա ոչ միայն կրծքի, այլև ընտանեկան բյուջեի համար: Դանիելյանի խոսքերով՝ անգլիական պրոթեզների (լավագույնների) գինը 500-1900 դոլարի սահմաններում է: Դրան պետք է հավելել նաև վիրահատության վարձը: Էժան չէ, սակայն «Պամելա Անդերսոնի նման կուրծք ունենալու» ցանկությունը չափազանց մեծ է: Դանիելյանը, որ բնական ձևերի կողմնակից է, երկար համոզել է հաճախորդին, սակայն ապարդյուն: Հավաստիացումները, թե յուրաքանչյուր կրծքում երկու բաժակ ջուր կրելը հեշտ բան չէ, արդյունք չտվեցին: Մինչդեռ սիլիկոնային պրոթեզը կարող է «թափառել», տեղաշարժվել՝ կրծքին հաղորդելով ամենևին էլ ոչ ցանկալի ձև: Ու սա լավագույն դեպքում: Վիրահատությունից հետո որևէ էնդոգեն վարակ կարող է անցանկալի երևույթների պատճառ դառնալ: Նույնիսկ ամենափոքր մրսածությունը պետք է ժամանակին բուժվի, իսկ առավել լուրջ դեպքերում անհրաժեշտ է ընդունել հակաբիոտիկներ, այլապես կուրծքն իրեն «անհամարժեք» ձևով կպահի: Ավաղ, իրականում հայ կանանց հետ է պահում միայն հակացուցումը (ուռուցքի առկայությունը կամ գինեկոլոգիական «շեղումները»): Իսկ եթե ամեն ինչ կարգին է, մեր կանայք վիրահատական սեղանին են բարձրանում գրեթե «կամիկաձեի» վճռականությամբ:

Բացի ռինո- և մամոպլաստիկայից, ավանդական լիպոսակցիայից և որովայնը ձգելուց (ծննդաբերությունից հետո), մեր կանայք, օրինակ, ցանկանում են շտկել ցցված ականջները: Ձգտում են մեծացնել շուրթերը, մեկընդմիշտ ձերբազատվել պիգմենտային բծերից, մաշկը (ամբողջ մարմնի) նրբացնել, գեղեցկացնել ոտքի մատները, լայնացնել կամ նեղացնել եղունգները: Մի խոսքով՝ պահանջների սպեկտրը սահմանափակվում է միայն հաճախորդի երևակայությամբ:

Ուշագրավ է, որ հաճախ վիրահատական միջամտության նախաձեռնողը տղամարդն է՝ ամուսինը կամ սիրեկանը: Շատերը նույնիսկ վիրահատությունը որպես նվեր են մատուցում, ասենք, Մարտի 8-ի առթիվ: Պլաստիկ վիրաբույժները փաստում են. Կանանց միջազգային օրվա առթիվ հաճախորդների թիվը, որպես կանոն, 2 անգամ ավելանում է: Սովորաբար կանանց կյանքի ուղեկիցները ձգտում են շտկել իրենց չքնաղագեղ տիկինների քթերը: Վերջին տարիներին կանանց շրջանում մեծ տարածում է գտել ռինոպլաստիկան. եթե նախկինում վիրահատվողների գրեթե 100%-ը տղամարդիկ էին, ապա այժմ կլինիկաներում ուժեղ սեռն ընդամենը 75% է:

Ի դեպ, ուժեղ սեռը ջանասիրաբար յուրացնում է պլաստիկ վիրահատության մյուս ճյուղերը՝ հաճախ տեղի տալով իր տիկնոջ ցանկությանը: Տղամարդիկ «աշխատում» են դիմագծերը նրբացնելու վրա, օրինակ՝ ոմանք ցանկանում են աչքերը նշաձև դարձնել: Չեն մոռանում նաև մաշկի թախիմության մասին. վերջերս կլինիկաներից մեկում տեղադրվեց մի սարքավորում՝ հատուկ տղամարդկանց դեմքը երիտասարդացնելու համար: Բժիշկները համոզված են՝ սարքավորումը պահանջարկ կունենա: Արական սեռը սկսել է ակտիվորեն հոգ տանել իր մարմնի մասին: Ու, ի դեպ, ինտիմ բաղադրիչի մասին նույնպես: Ինտիմ գեղագիտության գների մասին, լինի կանանց թե տղամարդկանց, կարելի է միայն ենթադրություններ անել, դրանք սովորաբար չեն հրապարակվում:

Ինչ էլ որ լինի, գեղագիտական վիրաբուժության զարգացման միտումները Հայաստանում ուրախալի են: Իհարկե, խոսքը բանականի սահմաններում կատարելության ձգտման մասին է: «Եթե շտկումը տեղին է ու բնական, ապա արժե դրան դիմել: Եթե ոչ, ապա պետք է հանդուրժել այն, ինչ ստեղծել է բնությունը»,- խորհուրդ են տալիս նրանք: Կամ էլ, թույլ տանք մեզ հավելել, փորձել ինքնահաստատվել ուրիշ եղանակներով:

Ասյա Ծատուրովա

Իդեալները. հարափոփոխ, ինչպես աշխարհը

Որքան էլ տարօրինակ է, մենք կարող ենք կանացի գեղեցկության մասին դատել՝ սկսած քարե դարից: Անցած դարում Ավստրիայում հայտնաբերվեց մի գրանիտե արձանիկ, որ ավելի քան 20 հազար տարվա պատմություն ունի: Այն անվանեցին «Վիլլենդորֆյան Վեներա»: Այդ «Վեներան» տպավորիչ տեսք ուներ. խոշոր կուրծք, մեծ, կախված փոր, հաստ ձեռքեր և ուսեր: Այս ամենը վկայում է մի բան. մարդկության արշալույսին գնահատվում էր ֆունկցիոնալը: Ամենից գեղեցիկ էին համարվում պտղաբեր կանայք, որոնք կարող էին շատ երեխաներ ծնել ու մեծացնել:

Անտիկ ժամանակներում իդեալական էր համարվում ներդաշնակ մարմինը՝ հանրահայտ Միլոսյան Վեներայի չափսերով՝ 86-69-93՝ 164 սմ հասակով: Նրան նման է Կնիդի Աֆրոդիտեն՝ Պրակսիտելի ձեռակերտը: Վերջինը՝ առաջինն էր «որ համարձակվեց կնոջ մերկ մարմին քանդակել: Ուշագրավ է, որ Պրակսիտելի բնորդուհուհ՝ կուրտիզանուհի Ֆրինային դատեցին արատավոր վարքի համար: Բայց դատավորներն ընդունեցին, որ այդքան կատարյալ մարմինը չի կարող մեղավոր հոգու անոթ լինել: Եվ Ֆրինան արդարացվեց:

X-XI դարերում Եվրոպան փառաբանում էր փխրուն, սպիտակամաշկ, արտաքուստ անպաշտպան ու անօգնական տիկնանց: Նորաձև դարձան բարձր հասակը և լայն ճակատը: Որպեսզի ճակատը որքան հնարավոր է մեծ լիներ, կանայք սափրում էին մազերի մի մասը, պարանոցը վիզուալ երկարացնելու նպատակով սափրվում էր ծոծրակը: Գնահատվում էին բարալիկ ձեռքերը, երկար մատներն ու եղունգները: Այս ամենի համատեքստում անհասկանալի է մի բան. գեղեցկության չափանիշները ենթադրում էին մեծ փոր: Նրանք, ովքեր բնությունից զրկված էին նման փորից, նույնպես ելք էին գտնում: Զգեստի տակից բարձիկ էին դնում, որը մեծ փորի տպավորություն էր ստեղծում:

Միջնադարյան Եվրոպայում խիստ կանոններ էին գործում՝ հաստատված կաթոլիկ եկեղեցու կողմից: Մարմնական գեղեցկությունը մեղք էր համարվում: Ուստի կանայք այնպիսի հագուստ էին հագնում, որը լիովին թաքցնում էր նրանց կազմվածքը: Բայց անգամ այդ բարդ ժամանակներում գեղեցկության որոշակի չափանիշներ կային. բավական համաչափ մարմնով կին՝ ոչ նիհար, ոչ էլ գեր: Ամենից շատ գնահատվում էին փոքր չափսերը: Փոքր պետք է լիներ ամեն ինչ՝ հասակը, ձեռքերը, ոտքերը, կուրծքը: Էլ ավելի գնահատվում էին հավատն առ Աստված և հնազանդությունը ամուսնուն: Շատ ուսումնասիրողներ գտնում են, որ հենց այդ ժամանակներում սկսեցին սափրել հոնքերը: Դա դեմքին բացակա, հանդարտ և հեզահամբույր արտահայտություն էր հաղորդում:

Վերածննդի դարաշրջանում սկսեցին գնահատել փարթամ մարմինը, այն, ինչ պատկերում էր իր կտավներում Ռուբենսը: Արժանիքներ էին համարվում հոլանի թևերը, լիքը ազդրերը և փարթամ կուրծքը: Ամեն կերպ՝ թե՛ զգեստի հատուկ ձևվածքով, թե՛ մեծ լանջաբացվածքով, թե՛ կարճ թևքերով ցուցադրվում էին մարմնի կլորավուն գծերը:

XVI դարի վերջերին սկիզբ առան այսպես կոչված տիկնիկային գեղեցկության ժամանակները: Կանայք պետք է նմանվեին փխրուն արձանիկների: Գեղեցկության էտալոն դարձան անիրական բարակ մեջքը, փոքր գլուխը՝ «կարապի» պարանոցով, նեղ ուսերը և փոքր կուրծքը: Շատերն իրենց սովի էին դատապարտում, քանի որ մշտական թերսնումը դեմքին ազնվաշուք գունատություն էր հաղորդում: Բայց ավելի հաճախ այդ դալկությունը ձեռք էր բերվում սպիտակ փոշու միջոցով: Առատորեն դիմափոշի էր գործածվում, որով ծածկվում էր փաստորեն ամեն ինչ՝ և՛ կեղծամը, և՛ հագուստը, և՛ մարմինը, որն ամիսներով չէր լվացվում: Այն ժամանակներում հիգիենիկ միջոցները չէին խրախուսվում. լոգանք էին ընդունում բացառիկ դեպքերում՝ երբեմն տարին կամ կես տարին մեկ անգամ: Մազերը նույնպես չէին լվանում. բազմացող միջատները մազերից հեռացվում էին հատուկ սանրերով: Այնպես որ փխրուն տիկինը՝ շքեղ զգեստով, իրականում բավական անհրապույր երևույթ էր:

XX դարի ոճի սրբապատկեր կարելի է համարել Մառլեն Դիտրիխին (30-60 թթ.)՝ սառը շիկահեր, որ երևան էր հանում այրական կանացիության սև-սպիտակ ոճը: Դիտրիխը փաթաթում էր կուրծքը, որպեսզի պահպանի տղայական կազմվածքը շեշտադրի տղամարդու կոստյումն ու գլխարկը:

50-ականների խորհրդանիշը Մերիլին Մոնրոն էր: Քնքուշ, դողդոջուն իրանը և կանացի գծերը շիկահերի կերպարը ջերմացրին և թեթևամտության, պչրանքի, անհավատարմության ու եթերայնության լուսապսակ ստեղծեցին: Գլամուրի կերպարը, կարելի է ասել, հենց նրանից սկսվեց:

60-ական թվականներին ծայր առավ «Թվիգգիի համախտանիշը»: Այդ անվանումը առաջին սուպերմոդելի պատվին է: 169 սմ հասակով նա կշռում էր 48 կգ, իսկ նրա չափսերը կարող են զարմացնել անգամ ժամանակակից կանանց՝ 80-55-80: Դեռահաս աղջնակի կերպարը՝ չափազանց նիհար, բարձրահասակ ու թերզարգացած, արմատացավ իբրև գեղեցկության իդեալ ոչ միայն պոդիումի վրա, այլև կյանքում: Տարածում գտան խիստ դիետաները, «հացադուլները» ու հյուծող մարզանքները: 70-ականներին երևան եկավ առողջ ապրելակերպի ուսմունքը, և սկսեցին հավասարակշռված դիետաներ մշակել, որոնք, սակայն, չփրկեցին անորեքսիայով տառապող մոդելներին:

Նոր դարի արշալույսին գեղեցկության էտալոնները փոխվեցին: «Կանացիություն+ֆիթնես». սա է մեր օրերի կարգախոսը: Արևայրուք, լավ զարգացած մկանային համակարգ, ինքնավստահություն և ինքնաբավություն. սրանք են ժամանակակից գեղեցկության չափանիշները: Սակայն 90-60-90 էտալոնը դեռ ուժի մեջ է: Կանացի գեղեցկության այդ չափանիշը նույն տպավորությունն է թողնում, ինչ ցեղական ձին կամ ավտոմեքենայի մակնիշը, և համարվում է կնոջ կողքին գտնվող տղամարդու հեղինակության գրավականը:

Բայց ոչ ոք չգիտի, թե ինչպես կփոխվի ճաշակը մի քանի տարի անց...

SOS

Փրկե՛ք ձեր դուստրերին

«Խոսեք ձեր դստեր հետ, քանի դեռ դա չի արել գեղեցկության արդյունաբերությունը»,- ազդարարում է սոցիալական հոլովակը, որ թողարկել է «Dove» ընկերությունը՝ դեռահասներին ամեն կողմից պարտադրվող արհեստական գեղեցկության չափանիշներից փրկելու նպատակով: Ինչպես ցույց է տվել «Dove»-ի կատարած հետազոտությունը, պարմանուհիներն ամեն օր մոդայիկ ամսագրերում ու գովազդներում այլազան գեղեցկուհիների այնքան նկարներ են տեսնում, որ դա բացասաբար է ազդում նրանց ինքնագնահատականի վրա: Նրանք հաշվի չեն առնում, որ ձևավորողները տարբեր գրաֆիկական ծրագրերի միջոցով «սրբագրում» են այդ նկարները: Ահա 1000 դեռահաս աղջիկների շրջանում անցկացված հարցման արդյունքում պարզվել է, որ նրանց 77%-ը՝ 11-14 տարեկան, տեսնելով մոդելների ու հոլիվուդյան դերասանուհիների նկարները, իրեն «գեր ու տգեղ» է համարում:

Անցյալ տարի նկարահանված «Կատաղի գրոհ» (Onslaught) հոլովակն ըստ էության ճանաչողական ֆիլմ է այն ծնողների համար, ովքեր բավարար ժամանակ չեն տրամադրում իրենց զավակներին և չեն պաշտպանում ագրեսիվ, նրանց տակավին չձևավորված աշխարհայացքն աղճատող տեղեկատվությունից: Ռեժիսորն առաջարկում է աշխարհին նայել շիկահեր, համակրելի աղջնակի աչքերով, և այն, ինչ տեսնում է երեխան, սարսափելի է. անբնական նիհարիկ մոդելներ, տոննաներով կոսմետիկա՝ պլաստիկ վիրահատությամբ սարքված դեմքերին, իմպլանտատներ և վիրահատական այլասերումներ, նիհարելու հաբեր ու հրաշագործ քսուքներ: Այս ամենը ասես ճչում է աղջնակի ականջին. «Փոխի՛ր քեզ: Դու պետք է լինես այնպիսի՛ն, ինչպիսին մե՛նք են ցույց տալիս»: Այնուհետև հանդիսատեսի առջև բացվում է այդ արդյունաբերության մյուս երեսը. բոտոքսի ներարկումներ, անորեքսիայի և բուլիմիայի զոհեր, որոնք հարմոնի պես մերթ նիհարում են Բուհենվալդի գերիների նման, մերթ չափազանց գիրանում...

Նկարագրված հոլովակն ընդամենը «Dove» ընկերության ձեռնարկումներից մեկն է՝ «Հանուն բնական գեղեցկության» քարոզարշավի շրջանակներում **(www.campaignforrealbeauty.co.uk.)**, որում նախատեսում է մինչև 2010 թվականն ընդգրկել 5 միլիոն երիտասարդ աղջիկների:

Ի դեպ

- Մյանմայի (Բիրմա) կանայք հպարտանում են իրենց պարանոցով: Եվ իրավունք ունեն. այս գեղեցկուհիների պարանոցի երկարությունը երբեմն հասնում է 50 սմ-ի: Պարանոցը ձգում են պղնձե օղակների միջոցով, որ կրում են պարանոցին՝ սկսած մանկությունից: Տարեցտարի այդ օղակների թիվն ավելանում է:

- Բոռնեո կղզու բնակչուհիները գեղեցկության գագաթնակետ են համարում մինչև ուսերը հասնող ականջները, որին հասնում են՝ բլթակներից բրոնզե կշռաքարեր կախելով: Ժամանակի ընթացքում նման «գինդերի» քաշը կարող է հասնել 3 կգ-ի:

- Կարամոջոնգ ցեղի համար (Սուդանի և Ուգանդայի սահմանին) կնոջ զարդարանք են համարվում մարմնի վրա հատուկ ձևավոր թարախապալարները: Այդ «գեղեցկության» համար կանայք ստիպված են տանջանքների ենթարկվել. մարմնի և դեմքի մաշկը կտրատում են երկաթե կեռիկով և ապա մի ամսվա ընթացքում այդ վերքերի վրա մոխիր ցանում:

- Սողոմոնյան կղզիների բնակչուհիները ամուսնանալով՝ զրկվում են վերին ատամնաշարից: Ատամները հանդիսավոր, քարի ու սրածայր փայտի օգնությամբ կոտրում է նրանց քեռին:

- Տիպո ցեղի հնդկացիների (Բրազիլիա) մայրերը իրենց դուստրերի դեմքերը փայտերով մամլում են: Դա պատիժ չէ վատ վարքի համար. ուղղակի աղջիկը չպետք է մեծանա կլոր դեմքով և ծիծաղատեղի դառնա: Դեմքը պետք է ձգված ու շատ նեղ լինի:

- Սահարայի անապատի տուարեգ ցեղում կանանց համար խայտառակություն է համարվում նիհարությունը: Գեղեցկուհին բազմաթիվ ծալքեր պետք է ունենա կողերին, մեծ փոր և փայլող դեմք: Այդ «իդեալին» հասնել շատ ավելի հեշտ է, քան ավելորդ քաշից ազատվելը: Աղջիկներին փոքրուց տեղավորում են վրաններում, որտեղ նրանք գրեթե չեն շարժվում և մեծ քանակությամբ ուղտի կաթ են խմում:

Հավելվածը հրատարակվում է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ

Խմբագիր՝ Թամարա Հովնաթանյան
Ձևավորումը՝ Վահե Դիոնեսյանի

Տպաքանակը՝ 7000